ՆԱԽԱԳԾԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ուսումնաօժանդակ ձեռնարկ «Կիրառական խնդիրները, մոտավոր մեթոդները և մոտավոր հաշվումները մաթեմատիկայի դպրոցական դասընթացում (5-9-րդ դասարաններ)»» անվանմամբ նախագիծը նվիրված է լինելու 5-6-րդ, 7-8-րդ և 9-րդ դասարանների մաթեմատիկայի (հանրահաշիվ և երկրաչափություն) ծրագրերի սահմաններում դպրոցականների նշված տարիքային խմբերին համապատասխան կիրառական խնդիրների դասերի մշակմանը և ներդրմանը դպրոցական մաթեմատիկայի ֆակուլտատիվ դասընթացներում և մանկավարժական համալսարանների «Մաթեմատիկա» մասնագիտության ուսումնական պլաններում ներգրավված «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» և «Խնդիրների լուծման պրակտիկում» դասընթացների ծրագրերում, ինչպես նաև մոտավոր մեթոդների և մոտավոր հաշվումների մեթոդապես մատչելի ու անհրաժեշտ խորությամբ շարադրմանը և կիրարկմանը: Ինչպես կիրառական խնդիրների, այնպես էլ մոտավոր մեթոդների և մոտավոր հաշվումների շարադրանքը ուղեկցվելու է դասարանից դասարան անցումային անընդհատության և նյութերի մատուցման աստիճանական խորացման սկզբունքային մոտեցմամբ՝ յուրաքանչյուր բաժնում օրինակների լայն ներգրավմամբ:

Ուսումնաօժանդակ ձեռնարկը նախատեսվում է 5-9-րդ դասարանների աշակերտների, մաթեմատիկայի ուսուցիչների, մանկավարժական համալսարանների ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետների ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար: